

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացու-
թյունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Ստյոպա Սաֆարյանի,
Բաֆֆի Հովհաննիսյանի, Անահիտ Բախշյանի, Լարիսա Ալավերդյանի, Արմեն Մարտիրոսյանի
և Զարուհի Փոստանջյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած
«Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և
«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու
մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

Հարկ ենք համարում նշել, որ «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ ժամանակավոր անաշխատունակության
նպաստի միջոցով մասնակիորեն կամ ամբողջությամբ փոխհատուցվում է անձանց ժամանա-
կավոր անաշխատունակության հետևանքով կորցրած աշխատավարձը (եկամուտը):

Նպաստները ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի աշխատան-
քային օրերի համար հաշվարկելը փոխկապակցված է նպաստի չափը հաշվարկելու համար
հիմք հանդիսացող միջին ամսական աշխատավարձի և նպաստի հաշվարկման կարգին:

Ներկայացված նախագծերի փաթեթի՝ «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի առաջին պարբերությունը, 2-րդ հոդվածը և «Եկամտահարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն անընդունելի են, քանի որ առաջարկվող փոփոխության դեպքում՝ նպաստի միջոցով տրամադրվող փոխհատուցումը կլինի ավելի բարձր, քան փոխհատուցման ենթակա աշխատավարձը (եկամուտը) է, որի համար ինչպես Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով, այնպես էլ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության 2011-2013 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 859-Ն որոշմամբ համապատասխան միջոցներ նախատեսված չեն:

«Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի երկրորդ պարբերության կապակցությամբ հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ խնդրո առարկան կարգավորված է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 172-րդ հոդվածով:

Միաժամանակ հայտնում ենք, որ, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 9-ի նիստի N 48 արձանագրության հանձնարարականի, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մշակել է «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, որը Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի N 296-Ն որոշմամբ սահմանված կարգով կդրվի հանրային քննարկման: Այդ կապակցությամբ 2010 թվականի դեկտեմբերի 24-ին քննարկում է կազմակերպվել Հայաստանի

Հանրապետության Ազգային ժողովի սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովում:
Քննարկման ընթացքում ներկայացվել են նախապատրաստվող փոփոխությունների հիմնական սկզբունքները՝ փոխկապակցված վարվող քաղաքականության հետ: Նշված քննարկման ընթացքում անդրադարձ կկատարվի նաև ներկայացված օրենքի նախագծի 3-րդ և 4-րդ հոդվածներով առաջարկվող փոփոխություններին:

Ներկայացված օրենքների նախագծերի փաթեթում պահպանված չեն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնները:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունմանը, և հեղինակներին առաջարկվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մշակված օրենքի նախագծի քննարկումների համատեքստում անդրադառնալ իրենց ներկայացրած դրույթներին:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արթուր Գրիգորյանը:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՎԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և
«Եկամտահարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն
կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ**

«Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և
«Եկամտահարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն
կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ
Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի
«Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում
կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին
թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի ենթակետերով նախատեսված
որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

Եզրակացություն

«Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին և Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և «Եկամտահարկի մասին և Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին և Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին և Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և «Եկամտահարկի մասին և Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին և Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր)՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը կազմվել է հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին և Հայաստանի Հանրապետության օրենքի 27¹ հոդվածի և 28-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները: Նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» N 18-Ն որոշման համաձայն:

Օրենքների նախագծերի առանձին դրույթներ համահունչ չեն ոլորտում վարվող քաղաքականությանը և չեն բխում խնդրո առարկա նպաստի տրամաբանությունից: Մասնավորապես, ժամանակավոր անաշխատունակության նպաստի միջոցով մասնակիորեն կամ ամբողջությամբ փոխհատուցվում է անձանց՝ ժամանակավոր անաշխատունակության հետևանքով կորցրած աշխատավարձը (եկամուտը): Ըստ այդմ, «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին և Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին պարբերությունը, 2-րդ և 3-րդ հոդվածները, «Եկամտահարկի մասին և Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին և Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն անընդունելի են, քանի որ առաջարկվող փոփոխության դեպքում, նպաստի միջոցով տրամադրվող փոխհատուցումը կլինի ավելի բարձր, քան փոխհատուցման ենթակա աշխատավարձն (եկամուտը) է:

«Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին և Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ պարբերության կապակցությամբ հարկ է նկատի ունենալ, որ այն կարգավորված է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 172-րդ հոդվածով, իսկ նախագծի 4-րդ հոդվածի դեպքում՝ բացակայում է կարգավորման առարկան:

Հաշվի առնելով վերոգրյալը, օրենքների նախագծերի փաթեթի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում.

ա) ռազմավարական ազդեցությունը բացասական է և կարիք ունի լրամշակման,

բ) շահառուների վրա ազդեցությունը չեզոք է, քանի որ առնչվում է սոցիալական պաշտպանության ոլորտի շահառուների փոքր խմբի (որոշակի դրական ազդեցություն ունի քիչ թվով ընտանիքների վրա՝ ավելացնելով նրանց եկամուտները):

Նախագիծ

Պ-1045-07.12.2010-ՄՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

ՀՈՂՎԱԾ 1. «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի (27-ը հոկտեմբերի 2010 թվական, ՀՕ-160) 11-րդ հոդվածի 1-ին մասից հանել «բոլոր աշխատանքային օրերի» բառերը, իսկ 2-րդ, 3-րդ, 4-րդ մասերից՝ «աշխատանքային օրերի» բառերը:

Ավելացնել նոր 1.1 մաս հետևյալ բովանդակությամբ.

«Հղիության եւ ծննդաբերության արձակուրդում գտնվելու ժամանակաշրջանում ժամկետից շուտ կամ ուշ ծննդաբերելու դեպքում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հղիության եւ ծննդաբերության արձակուրդի ընդհանուր օրերի թիվը եւ դրանց համար վճարվող հղիության եւ ծննդաբերության նպաստի չափը մնում են անփոփոխել:

ՀՈՂՎԱԾ 2. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «աշխատանքային օրերի» բառերը:

ՀՈՂՎԱԾ 3. Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասում «հինգապատիկը բառի փոխարեն գրել «հինգապատիկը, որից հետո ավելացնել «(բացառությամբ հղիության եւ ծննդաբերության նպաստի)» արտահայտությունը:

Հոդվածի 6-րդ մասի 1-ին եւ 2-րդ նախադասությունների վերջում ավելացնել «, բացառությամբ հղիության եւ ծննդաբերության նպաստների» արտահայտությունը:

Ավելացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հղիության եւ ծննդաբերության նպաստը հաշվարկվում է՝ ժամանակավոր անաշխատունակության ժամանակաշրջանի օրացուցային օրերը բազմապատկելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված միջին օրական աշխատավարձով: Հղիության եւ ծննդաբերության նպաստ հաշվարկելիս հիմք ընդունվող միջին աշխատավարձը վերցվում է հարյուր տոկոսի չափով:

7-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի նպաստի չափը հաշվարկվում է նպաստի յուրաքանչյուր տեսակի համար սույն հոդվածով սահմանված ընդհանուր կարգով:

ՀՈՂՎԱԾ 4. 27-րդ հոդվածի 4-րդ մասում «նպաստի գումարը բառերից հետո ավելացնել «կամավոր վերադարձնելուց հրաժարվելու դեպքում» արտահայտությունը:

Ավելացնել նոր նախադասություն.

«Ավել վճարված նպաստի գումարը կամավոր վերադարձնելու համար անձը ծանուցվում է գրավոր ձևով:

Հոդվածի 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

ՀՈՂՎԱԾ 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-1045՝-07.12.2010-ՍՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«Եկամտահարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. «Եկամտահարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի (27-րդ դեկտեմբերի 1997 թվական, ՀՕ-183) 7-րդ հոդվածի «ա» կետի վերջում «նպաստների բառից հետո ավելացնել «(որոնց մեջ չեն ներառվում հղիության եւ ծննդաբերության նպաստները)» արտահայտությունը:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ Օրենք) փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակման հիմքը նախեւառաջ սոցիալական արդարության վերականգնման նպատակն է: Մեր պետության առաջնային խնդիրներից մեկը ծնելիության բարձրացմանը նպաստելն է, սակայն այս Օրենքի արդյունքում տեղի է ունենում ճիշտ հակառակը: Նախագծով առաջարկվում է գոնե վերականգնել նախկին դրությունը՝ հղիության եւ ծննդաբերության նպաստը սահմանել միջին աշխատավարձի չափով (ոչ թե ավելացնել նպաստների չափը):

Օրենքի 27-րդ հոդվածում առաջարկվող փոփոխության նպատակն է նպաստները կամավոր վերադարձնելու պատրաստակամություն ունեցող անձին ազատել հարկադիր կատարման ծախսերից եւ ավելորդ չծանրաբեռնել դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը:

Հիմնավորված չէ Օրենքում ամրագրված այն մոտեցումը, ըստ որի՝ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի նպաստը հաշվարկվում է միջին աշխատավարձի հիման վրա՝ ժամանակավոր անաշխատունակության օրացուցային օրերի թվով բազմապատկելով, իսկ վարձու աշխատող կանանց հղիության եւ ծննդաբերության նպաստը հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակության ժամանակաշրջանի աշխատանքային օրերի հիման վրա: Առաջարկվում է նպաստի հաշվարկման միասնական կարգ սահմանել:

«Եկամտահարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում առաջարկվող փոփոխության նպատակը հղիության եւ ծննդաբերության նպաստները չհարկելն է՝ հաշվի առնելով դրանց խիստ նպատակային նշանակությունը եւ երկրում առկա՝ հետզհետե ավելացող գնաճը:

Ուսումնասիրվել է մի շարք երկրների, այդ թվում Լատվիայի, Լիտվայի, Ռուսաստանի Դաշնության, համապատասխան օրենսդրությունը, որոնցում նույնպես ամրագրված են նմանաբովանդակ դրույթներ:

Օրենքում առկա հիշյալ դրույթներով խախտվում է նաեւ Հյաստանի մասնակցությամբ գործող Եվրոպական սոցիալական խարտիայի նույնիսկ նախաբանում ամրագրված նպատակը, ոտնահարվում է աշխատող կանանց՝ մայրության դեպքում հատուկ պաշտպանվածության իրավունքը (Խարտիայի 1-ին մասի 8-րդ կետ, 2-րդ մասի 8-րդ հոդված): Նշենք, որ Խարտիան հիշյալ նորմերից որեւէ բացառություն չի նախատեսում:

Բացի վերը նշվածը, Եվրոպական հարեւանության քաղաքականության ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011թթ. միջոցառումների ցանկում /ՀՀ Նախագահի 2009թ. մայիսի 6-ի ՆԳ-68-Ա կարգադրության հավելված/ հստակ ամրագրված է. «իրականացնել Եվրոպական սոցիալական խարտիայի շրջանակներում Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով Եվրոպական կառույցների հետ համագործակցության զարգացում, Եվրոպական սոցիալական խարտիայի չափանիշներին համապատասխան բարեփոխումների ծրագրի մշակում եւ իրականացում»:

Սույն նախագծով ապահովվում է վորոնշյալ միջազգային պարտավորությունների կատարումը՝ մեր քաղաքացիների եւ միջազգային հանրության առջեւ: